Հարկային տեղեկատվական համակարգ
www.taxinfo.am

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ «ՀՍԿԻՉ-ԴՐԱՄԱՐԿՂԱՅԻՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ընդունված է
19 դեկտեմբերի 2012 թ.

**Հոդված 1.** «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» Հայաստանի Հանրապետության 2004 թվականի նոյեմբերի 22-ի ՀՕ-129-Ն օրենքի 6-րդ հոդվածի առաջին պարբերության «ա» կետն ուժը կորցրած ճանաչել:

**Հոդված 2.** Օրենքի 7-րդ հոդվածում`

1) «ե» կետը «կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը» բառերից հետո լրացնել «(բացառությամբ շրջանառության հարկ վճարողների)» բառերով.

2) նույն կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությունով.

«Մինչև սույն հոդվածի «դ» կետով նախատեսված ժամկետները շրջանառության հարկ վճարողները յուրաքանչյուր հսկիչ-դրամարկղային մեքենայով իրականացված դրամական հաշվարկների հանրագումարի վերաբերյալ եռամսյակային տեղեկությունները ներառում են սահմանված կարգով հարկային մարմին ներկայացվող շրջանառության հարկի հաշվարկում:»:

**Հոդված 3.** Օրենքի 8-րդ հոդվածից հանել առաջին նախադասությունը:

**Հոդված 4.** Սույն օրենքն ուժի մեջ է 2013 թվականի հունվարի 1-ից:

Հայաստանի Հանրապետության
Նախագահ — Ս. Սարգսյան

28 դեկտեմբերի 2012 թ.
Երևան
ՀՕ-241-Ն